Co-funded by the Erasmus+ Programme of the European Union

ԷԼԿԱՄՊՈՒՍ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՊԱՀՊԱՆՈՂ ԵՎ ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿԱՄՊՈՒՍԱՅԻՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՈՒՀԵՐՈՒՄ

learn smarter

ՆԱԽԱԳԾԻ ԿՈՆՍՈՐՑԻՈՒՄԸ

ԷԼԿԱՄՊՈՒՍ նախագծին մասնակցում են հետևյալ հաստատությունները Հայաստանից և ԵՄ երկրներից

Հայաստանյան հաստատություններ

- Երևանի պետական համալսարան (ԵՊՀ), ծրագրի համակարգող
- Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան (ՀՊՄՀ),
- Մ. Հերացու անվան Երևանի պետական բժշկական համալսարան (ԵՊԲՀ)
- Հյուսիսային համալսարան (ՀՀ)
- ՀՀ ԳԱԱ Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտ (ԳԱԱ ԻԱՊԻ)
- Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն հիմնադրամ (ՈԱԱԿ)
- ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն (ԿԳՄՄՆ)

Եվրոպական հաստատություններ

- Մադրիդի ինքնավար համալսարան (ՄԻՀ), Իսպանիա
- Լիսաբոնի համալսարան (ԼԻՍԲՕՀ), Պորտուգալիա
- Ջենովայի համալսարան (ՋԵՀԱՄ), Իտալիա
- Ստոկհոլմի թագավորական տեխնիկական ինստիտուտ (ԹՏԻ), Շվեդիա

eCAMPUS@ysu.am

www.eCAMPUS.am

Իմանալ ավելին

ԷԼԿԱՄՊՈՒՍ նախագծի վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք դիմել.

նախագծի համակարգող թիմ՝ eCAMPUS@ysu.am

նախագծի պաշտոնական կայքէջ՝ www.eCAMPUS.am

Համաֆինանսավորվել է Եվրոպական միության կողմից: Այնուամենայնիվ, արտահայտված տեսակետներն ու կարծիքները պատկանում են միայն հեղինակ(ներ)ին և անպայմանորեն չեն արտացոլում Եվրոպական միության կամ Եվրոպական կրթության և մշակույթի գործադիր գործակալության տեսակետները: Ո՛չ Եվրոպական միությունը, ո՛չ էլ դրամաշնորհի տրամադրող մարմինը պատասխանատվություն չեն կրում դրանց համար:

WWW. e CAMPUS.AM

ERASMUS+ Project # 101177299-eCAMPUS-EDU-2024-CBHE

ԻՆՉՈՒ Է ԼԿԱՄՊՈՒՍ

Այս նախագիծը նպատակաուղղված է առցանց և թվային կրթության որակին առնչվող խնդիրների լուծմանը, որը համընդհանուր է գործընկեր երկրների համար:
Էրազմուս+ Էլ-Կամպուսը Բարձրագույն կրթության ոլորտում կարողությունների զարգացմանն ուղղված՝ Եվրամիության կողմից ֆինանսավորվող քառամյա նախագիծ է, որի նպատակը Հայաստանի բարձրագույն կրթության համակարգում առցանց և թվային դասավանդման ու ուսուցման որակի բարելավումն է:

Նախագծի հիմնական երկարաժամկետ նպատաներն են՝

Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատություններում (բուհ) առցանց դասավանդման, ուսումնառության և գնահատման (ԴՈՒԳ) որակի բարելավում ԵՄ «Թվային կրթության գործողությունների 2021-2027 թթ. պլանին» համահունչ:Այն ենթադրում է դասախոսական կազմի թվային կարողությունների և հմտությունների խթանում և առցանց ԴՈՒԳ-ի համար որակի ներքին ապահովման մեխանիզմների ներդրում:

Արտակարգ իրավիճակների պայմաններում իրականացվող հեռավար ուսուցումից անցում դեպիառավել նպատակային, ներգրավող և կայուն հետքովիդյան համալսարանական(կամպուսային)կրթություն:Նպատակն է ապահովել բարձրորակ թվային կրթություն, որը պատրաստ կլինի դիմակայելու հնարավոր ապագա մարտահրավերները՝ հուսալի թվային կրթության էկոհամակարգի, համապատասխան կարգավորող մեխանիզմների, նորարարական կրթական պրակտիկաների և մոդելային ենթակառուցվածքների զարգացմամբ:

ՆԱԽԱԳԾԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Նախանշված նպատակներին հասնելու համար նախագիծը կենտրոնանալու է հետևյալ խնդիրների իրականացման վրա.

1. Դրանով կսահմանվեն և կկանոնակարգվեն ԴՈՒԳ կիրառող դասախոսական կազմի համար անհրաժեշտ կարողություններն ու հմտությունները, որոնք համահունչ են թվային կրթության գլոբալ միտումներին:
2. Թվային ԴՈՒԳ-ի ազգային հավաստագրային վերապատրաստման ծրագրի ստեղծում: Դասախոսների մանկավարժական կարողությունները և թվային ԴՈՒԳ մեթոդների կիրառման հմտությունները բարելավելու նպատակով ծրագրի շրջանակներում կիրականացվեն վերապատրաստումներ, ինչը կապահովի դասախոսների շարունակական մասնագիտական զարգացումը:
Վերապատրաստումների արդյունքում դասախոսներին կտրամադրվի համապատասխան հավաստագիր:
3. ՀՀ բուհական համակարգում թվային ԴՈՒԳ-ի որակի ներքին ապահովման համակարգի ստեղծում: Այս համակարգի ներդրումը կնպաստի առցանց կրթության որակի բարելավմանը, կմշակվեն չափանիշներ, այդ թվում՝ հստակ չափորոշիչներ, ընթացակարգեր և գործիքներ որակի գնահատման, ինքնավերլուծության և շարունակական բարելավման համար՝ համաձայն Եվրոպական բարձրագույն կրթության տարածքի (ԵԲԿՏ) թվային ԴՈՒԳ-ի որակի ապահովման (ՈԱ) չափանիշների:
4. Հայաստանի բուհերի համար էլեկտրոնային ուսուցման մուլտիմեդիա հարթակների և խելացի լսարանների մոդելների հենանիշային չափորոշիչների մշակում: Այն կնպաստի արդյունավետ և ներառական ուսումնական միջավայրերի ձևավորմանը՝ խթանելով տեխնոլոգիապես հագեցած ուսուցման մոդելների ներդրումը, ինչը կապահովի թվային ուսուցման ռեսուրսների հասանելիություն բոլոր ուսանողների համար:
5. Հայաստանի բարձրագույն կրթության համակարգում մասնակի բեռնվածությամբ ուսուցումը կարգավորող ենթաօրենսդրական դաշտի, դասընթացներին առցանց գրանցման և ուսանողների առաջընթացի հաշվառման համընդհանուր էլեկտրոնային հարթակի ստեղծում: Այս միջոցառումները կստեղծեն օրենսդրական և գործառնական հիմքեր՝ նպաստելով հայաստանյան բուհերում հեռակա ուսուցումից անցում կատարելու դեպի մասնակի բեռնվածությամբ ուսուցման ձևաչափին՝ ընդլայնելով ուսուցման հասանելիությունը, այդ թվում՝ հատուկ կարիքներ ունեցող ուսանողների համար:

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Նախագծի արդյունքները նշանակալի ազդեցություն կունենան ինչպես կոնսորցիումի անդամ հաստատությունների, այնպես էլ ամբողջ կրթական համակարգի վրա ինստիտուցիոնալ, ազգային և տարածաշրջանային մակարդակներում.

Ինստիտուցիոնալ մակարդակում.

Նախագծի արդյունքում Հայաստանի բուհերի ավելի քան 120 դասախոս և վարչական աշխատակից ձեռք կբերեն թվային ԴՈՒԳ-ին, ինչպես նաև ՈԱ-ին ուղղված նոր հմտություններ և կարողություններ: Բացի այդ, կստեղծվի վերապատրաստման ազգային հավաստագրային ծրագիր՝ նախատեսված թվային ԴՈՒԳ կիրառող դասախոսական կազմի շարունակական մասնագիտական զարգացման համար: Կստեղծվի նաև տեխնոլոգիապես հագեցած 8 «խելացի լսարան»՝ հիբրիդային և խառը թվային ուսուցում կազմակերպելու նպատակով:

Ազգային մակարդակում.

Նախագիծը կնպաստի թվային ԴՈՒԳ-ի համար նախատեսված Թվային կարողությունների շրջանակի և Ազգային հավաստագրային ծրագրի ներդրմանը: Նախագծի շրջանակներում կվերանայվեն թվային ԴՈՒԳ-ի որակի ներքին ապահովման չափորոշիչները, կմշակվեն հենանիշային չափորոշիչներ էլեկտրոնային ուսուցման մուլտիմեդիա հարթակների համար և կսահմանվեն դասընթացներին առցանց գրանցման և ուսանողների առաջընթացի հաշվառման համընդհանուր էլեկտրոնային հարթակի ձևավորման պահանջները:

Եվրոպական մակարդակում.

Նախագիծը կնպաստի լավագույն փորձի փոխանակմանը, գործընկերային ուսուցմանը և շահառուների միջև համագործակցային կապերի ընդլայնմանը: Այս համագործակցությունը կապահովի երկարաժամկետ գործընկերային հարաբերություններ նախագծի ԵՄ անդամ հաստատությունների հետ, ինչը կնպաստի Հայաստանի բարձրագույն կրթության համակարգի ավելի խորը ինտեգրմանը Եվրոպական բարձրագույն կրթության տարածքին (ԵԲԿՏ):